Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 15 մայիսի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 16–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի և ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:**
2. **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացված հայտերի քննարկման և երաշխավորման հարցը:**
3. **Ընթացիկ հարցեր:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի և ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը: Օրակարգի առաջին հարցը վերաբերում է Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի և ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացմանը:

Եղույթ ունեցավ՝ գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դաղայանը, ով նշեց, որ ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համար դիմել է Աշոտ Իշխանի Մարկոսյանը, իսկ գիտաշխատողի թափուր պաշտոնի համար՝ Լիանա Արթուրի Հայրիյանը:

Ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդ Աշոտ Իշխանի Մարկոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Ա. Մարկոսյանը 1972-1977 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետում, այնուհետև աշխատանքի է անցել Ա.Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում: 1984 թ. Պաշտպանել է թեկնածուական, իսկ 2010 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Ա. Մարկոսյանը հեղինակ է ավելի քան 150 տպագրված աշխատանքների (հոդվածներ, թեզիսներ և արտոնագրեր): Ղեկավարել և մասնակցել է ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային դրամաշնորհների կատարմանը:

Գիտաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդ Լիանա Արթուրի Հայրիյանի կողմից ներկայացվել են նշված պաշտոնի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, որոնք լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Լ. Հայրիյանը 2009-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիա բաժնում, այնուհետև, 2013-2015թթ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեղագիտություն բաժնում և ստացել դեղագիտության մագիստրոսի աստիճան: 2017-2019թթ. մինչ օրս համատեղությամբ աշխատում է Երևանի պետական համալսարանում՝ որպես Ֆարմացիայի ինստիտուտի, ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի լաբորանտ: 2021թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Լ. Հայրիյանը հեղինակ է 26

գիտական աշխատանքի, որոնցից 12 գիտական հոդված, 14 թեզիս: Ղեկավարում է 1 տեղական դրամաշնորհի, և որպես կատարող ներառված է ՄԳՏԿ № AM-2705 միջազգային դրամաշնորհում:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ ք.գ.թ. Ս. Վարդապետյան,

անդամներ՝ ք.գ.թ. Ս. Պետրոսյան

ուսանող Հ. Օհանջանյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 20 անդամներից 16-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 16 անդամներ:

Աշոտ Իշխանի Մարկոսյանի ավագ գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 16 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Լիանա Արթուրի Հայրիյանի գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 16 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Որոշեցին՝ Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և.

1.1. **Աշոտ Իշխանի Մարկոսյանին** համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատողի պաշտոնում:

1.2. **Լիանա Արթուրի Հայրիյանին** համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի պաշտոնում:

2. **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացված հայտերի քննարկման և երաշխավորման հարցը:**

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ Ա. Մկրտչյանին, ով տեղեկացրեց, որ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու նպատակով

Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվել են 3 հայտ՝ Հ. Սիմոնյանի, Ա. Մարկոսյանի և Լ. Սահակյանի կողմից, որոնք անհրաժեշտ է երաշխավորել մրցույթին մասնակցելու համար: Ա. Մկրտչյանն առաջարկեց հայտերի ղեկավարներին համառոտ ներկայացնել թեմաների շրջանակներում նախատեսվող աշխատանքները:

Եզույթ ունեցան՝ Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, Ֆարմացիայի ԳՀ կենտրոնի ավագ գիտաշխատող Աշոտ մարկոսյանը և նույն կենտրոնի փորձագետ՝ Լուսինե Սահակյանը: Նրանք համառոտ ներկայացրեցին թեմատիկ ֆինանսավորման նպատակով ներկայացված հայտերի բովանդակությունը և պատասխանեցին հարցերին: Գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանն առաջարկեց ներկայացված հայտերը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար, քանի որ դրանք ներկայացվել և քննարկվել են ինստիտուտի ամբիոնների նիստերում և գնահատվել են դրական:

Որոշեցին՝ (միաձայն) ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար երաշխավորել հետևյալ հայտերը.

1. «Նոր ոչ սպիտակուցային ամինոթթուների ասիմետրիկ սինթեզ. դրանց կենսաբանական պոտենցիալի ու սինթետիկ կիրառության բացահայտում»: (Ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյան)
2. «Նոր բենզո[h]խինազոլինների ածանցյալների, դրանց հենքի վրա ամինոթթուների և պեպտիդոմիմետիկների նպատակային սինթեզ ու կենսաակտիվության հետազոտում»: (Ղեկավար՝ ք.գ.դ. Ա. Մարկոսյան)
3. «Շրջակա միջավայրի օբյեկտներում կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակի հայտնաբերում և դրանց չեզոքացման կենսաբանական և քիմիական մեթոդների ուսումնասիրություն»: (Ղեկավար՝ դ.գ.թ. Լ. Սահակյան)

4. **Ընթացիկ հարցեր**:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ք.գ.թ, դոցենտ	Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ք.գ.թ., դոցենտ	Ա. Դաղայան